ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2022թվականի N 10

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԻ ԵՎ ԴՐԱ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերի, հիմք ընդունելով Կարեն Նավասարդյանի 2021 թվականի հունվարի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՀ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի 2022 թվականի հունվարի 4-ի թիվ 3 մասնագիտական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Վանատուր թաղամասումգտնվող 0334-0006 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 72/4:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 257 տան բնակիչ Կարեն Նավասարդյանի կողմից ինքնակամ կառուցած Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 72/4 հասցեում գտնվող84.0քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության խորդանոցը ճանաչել օրինական:

3.Խորդանոցը և դրանով զբաղեցված 84.0քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

13 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հունվարի 2022թվականի N 11

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշմամբ հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 24-ի N39-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:
2. Հաստատել Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
3. Հանրային քննարկման անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:
4. Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման անցկացման վերաբերյալ հայտարարության տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5. Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

14 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունվարի 14-ի
N 11 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2022 թվականի հունվարի 14-ից մինչև հունվարի 27-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի ավագանու՝ «Հրազդան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2022 թվականի հունվարի 27-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկման ընթացքում՝ 2022 թվականի հունվարի 31-ին ժամը 11:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060704010 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2022թվականի N 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ, ԼԵՌՆԱՆԻՍՏ, ՔԱՂՍԻ, ՍՈԼԱԿ ԵՎ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 24-ի N39-Նորոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ և Ջրառատ համայնքների զարգացման ծրագրերի 2021 թվականի կատարողական հաշվետվությունների նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:
2.Հաստատել Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ և Ջրառատ համայնքներիի զարգացման ծրագրերի 2021 թվականի կատարողական հաշվետվությունների նախագծի վերաբերյալ կազմակերպվող քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3.Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:
4.Հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովելհամայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ և Ջրառատ համայնքներիի զարգացման ծրագրերի 2021 թվականի կատարողական հաշվետվությունների նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերիտեղադրումը,ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել Հրազդան համայնքի

տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

17 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունվարի 17-ի
N 12 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2022 թվականի հունվարի 17-ից մինչև հունվարի 31-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ և Ջրառատ համայնքների զարգացման ծրագրերի 2021 թվականի կատարողական հաշվետվությունների նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ և Ջրառատ համայնքներիի զարգացման ծրագրերի 2021 թվականի կատարողականների հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2022 թվականի հունվարի 31-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում՝ 2022 թվականի փետրվարի 1-ին ժամը 12:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-704010 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

17 հունվարի 2022թվականի N 13

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 84-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2006 թվականի մայիսի 24-ի N39-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:
2.Հաստատել Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3.Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:
4.Հանձնարարել Հրազդան համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի 2021 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերի տեղադրումը,ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

17 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի հունվարի 17-ի
N 13 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2022 թվականի հունվարի 17-ից մինչև հունվարի 31-ը ներառյալ կազմակերպվող 2021 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված 2021 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2022 թվականի հունվարի 31-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում՝ 2022 թվականի փետրվարի 1-ին ժամը 11:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060704010 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2022թվականի N 14

ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սուլթան Մարգարյանի լիազորված անձ Մերրի Նազարյանի 2022 թվականի հունվարի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Սուլթան Մարգարյանին ժառանգության իրավունքով փոխանցված /22 ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հունվարի 11-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում թիվ 81-ով, ժառանգական գործ 03/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում գտնվող ավտոտնակին (կադաստրային համար՝ 07.001.455.008) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տիգրան Մեծի փողոց 79:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

17 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2022թվականի N 15

ԿԱԹՍԱՅԱՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կարինե Բարսեղյանի 2022 թվականի հունվարի 13-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 32 շենքի թիվ 123 բնակարանի բնակիչ Կարինե Բարսեղյանին պատկանող (2022 թվականի հունվարի տասներեքին Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից տրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, գրանցված գրանցամատյանում N 40) Հրազդան քաղաքի Պ.Դուրյան փողոց հասցեում գտնվող կաթսայատանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Պ.Դուրյան փողոց 8:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

17 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2022թվականի N 16

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Հերիկ Ալեքսանյանի 2022 թվականի հունվարի 12-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երկաթգծի կայարան հասցեի բնակիչ Հերիկ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2508613, տրված՝ 2008 թվականի դեկտեմբերի 2-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 8 շենքի առաջին հարկում գտնվող ոչ բնակելի տարածքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 8/6:
2.Հերիկ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 8/6 և (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30112021-07-0023, գաղտնաբառ՝ FWCXPZPUEPPA) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 8/10 հասցեներում գտնվող միավորված ոչ բնակելի տարածքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 8/10:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ***

17 հունվարի 2022թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2022թվականի N 17

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի հունվարի 21-ին ժամը 11.00-ին հրավիրել Հրազդան համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցերի անհրաժեշտությունից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

18 հունվարի 2022թ.
ք.Հրազդան